## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**26.02.2024 17:59**

Հայաստանի Հանրապետությունում Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի ներկայացուցչության հետ համատեղ իրականացվելիք ծրագրի շրջանակներում  ՀՀ փաստաբանների պալատը նախատեսում է ներգրավվել փաստաբանների և փաստաբանի արտոնագիր չունեցող իրավաբանի՝ ապաստան հայցողներին և Արցախից տեղահանված անձանց իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

Ծրագրին ներգրավելու ցանկություն ունեցող փաստաբանները և իրավաբանները կարող են շարժառիթային (մոտիվացիոն) նամակ ուղարկել deputychairman2@advocates.am էլ. փոստի հասցեին՝ կցելով մասնագիտական կարողությունները նկարագրմամբ ինքնակենսագրությունը (CV):

Դիմելու **վերջնաժամկետը 2024 թվականի փետրվարի 29**-ն է:

Ծրագրին ներգրավված փաստաբանների վարձատրության ուղենիշ է ընդունված հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափը:

Ընտրության հարցում առաջնահերթությունը տրվելու է ոլորտում մասնագիտական փորձառություն և օտար լեզուների իմացություն ունեցող հավակնորդներին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })